Ղ

# ԱՂՋԻԿ ԷԿԱՎ ԲՈՒԼԱՆՈՒԽԱ

Աղջիկ էկավ Բուլանուխա,
Հանինայ, նինայ,
Արևն էրեսին կը շողա,
Ջանինայ, նինայ,
Ծոցիկն է բաց բամբկի բուլա,
Հանինայ, նինայ,
Աչքրս պեսե, սիրտրս կուլա,
Ջանինայ, նինայ:

Հանայ, նինայ, նինայ, նինայ
Հանինայ, նինայ,
Կրկնակ — Հանբրա նինայ, նինայ, նինայ,
Հանինայ, նինայ:

Ծամերը քառսուն ճյուղ արած,
Մեջը լի մարգարիտ շարած,
Հագի բեյով նրշխուն դեյրեն
Մեղրամոմ մատներով կարած:

Կրկն.

Մեջքը նազուկ՝ ծովեն քաշած,
Էրես բաց լուսին բոլորած,
Աչքերը ղալամով քաշած,
Ես ուր սիրուն հալած-մաշած:

Կրկն.

Ծաղիկներս դեռ չը ջրած,
Իմ ճակտին էս էր գրված,
Անուշ յարիս հեփ ապրելու,
Ուխտ ու պայման փող եմ դրած:

Կրկն.

